Ծուշանիկ Կուրղինյան

Մոլորվածներին

Ձեր սև շարքերին երբե՛ք չեմ ատում .
Այդպես է կյանքը, դուք՝ կյանքի ծնունդ .
Մոլոր տենչերիդ իմ սիրող սրտում
Երբեք չբացի գարշանքի անդունդ:

Կանցնի բռնություն . վերածնության
Արշալույսի հետ կզարթնեք և դուք .
Գիտակից միտքը անդորրի խթան
Չի թողնի երբեք գերի կամ ստրուկ:

Սև հարյուրներիդ ջինջ լույս կը տեղա,
Մեղքը ձեզանից կընկնի խո՛րթ, հեռո՛ւ .
Մինչ այժմ արյունոտ ձեռքը կը դողա՝
Զոհելու մարդուն կրքին քինառու:

Եվ տխրահոչակ անցյալը նախճիր
Սրտանց կը ձգտեք հավերժ թաղելու .
Նոր, բյուրեղացած կյանքում անոճիր
Ազնիվ գործերի կը դիմեք հլու:

1908 թ. 18 հունվարի